

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ**

*Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
30.05.2023 թ. թիվ 78 Ա որոշմամբ*

**ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(2022 թ. 2-րդ եռ. - 2023 թ. 1-ին եռ.)**

2022 թվականի 2-րդ եռամսյակից մինչև 2023 թվականի 1-ին եռամսյակն ընկած ժամանակահատվածի սկզբում ՀՀ-ում գնաճային միջավայրն ընդլայնվել է՝ պայմանավորված փեփրվարի վերջից ռուս-ուկրաինական հակամարտության սրման, Ռուսաստանի դեմ կիրառված փարբեր պարթամիջոցների և դրանցից ածանցված մեծ անորոշությունների ազդեցությամբ: Մինչև 2022 թ. վերջ բարձր գնաճային միջավայրը պահպանվել է, ինչին նպաստել է նաև ռուս-ուկրաինական հակամարտության հեղանակով դեպի Հայաստան միջազգային այցելուների և ֆինանսական միջոցների մեծածավալ ներհոսքի պայմաններում ձևավորված համախառն բարձր պահանջարկը: Հուլիսին համախառն ազդեցությամբ փարվա ընթացքում ՀՀ արժույթային շուկայում դիտվել է դրամի շարունակական արժևորում: 2022 թ. վերջից առաջատար երկրների ԿԲ-ների իրականացրած զսպողական դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ միջազգային ապրանքահումքային շուկաներում արձանագրվել է պարենի և էներգակիրների գների որոշակի նվազում, ինչը մի շարք ներմուծվող ապրանքների միջոցով փոխանցվել է ՀՀ ներքին գներին: Սակայն ՀՀ-ում պահպանվող բարձր պահանջարկի և գնաճային սպասումների ազդեցությամբ առավելապես «կոշտ» գներով աչքի ընկնող ապրանքախմբերում գները շարունակել են աճել:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ԿԲ-ն հաշվեփու ժամանակահատվածում շարունակել է վարել դրամավարկային պայմանները խստացնելու քաղաքականություն՝ բարձրացնելով քաղաքականության փոկոսադրույքը, ընդհանուր առմամբ, 1.5 փոկոսային կետով: Արդյունքում՝ թեև 2022 թ. երկրորդ եռամսյակում 12-ամսյա գնաճը ձևավորվել է 10.3% մակարդակում, այնուհետև, իրականացված զսպողական դրամավարկային քաղաքականությամբ, դրամի արժևորմամբ և արտաքին հատվածից գնաճային ազդեցությունների թուլացմամբ պայմանավորված, աստիճանաբար նվազել է և 2023 թ. մարտի վերջին կազմել 5.4%: Գնահատվում է, որ վերջինս առաջիկայում կշարունակի նվազել և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:


1. ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2022 թ. 2-րդ եռամսյակի ծրագրում ներկայացված սցենարի հիմնական դատողությունների համաձայն՝ առաջիկա մեկ տարվա ժամանակահատվածում գնաճային միջավայրը պահպանվելու էր բարձր՝ պայմանավորված ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով արտաքին շուկաներից փոխանցվող գնաճային ազդեցություններով և միջազգային այցելուների ու ֆինանսական միջոցների գնահատվող ներհոսքի պայմաններում ՀՀ տնտեսությունում ձևավորվող բարձր պահանջարկով: Միաժամանակ, գնահատվում էր, որ գնաճի գործոնների կազմում գերակշռող համաշխարհային գնաճային երևույթների և արտաքին պահանջարկի ազդեցությունները, ՀՀ դրամի զուգահեռաբար ընթացող արժևորման պարագայում, տարվա ընթացքում կթուլանային՝ չեզոքացնելով գնաճի ու գնաճային սպասումների հետ կապված ռիսկերը: Արդյունքում՝ դրամավարկային քաղաքականության իրականացվող խստացումների և սպասվող մակրոտնտեսական զարգացումների ներքո 12-ամսյա գնաճը միջնաժամկետում աստիճանաբար կնվազեր և կկայունանար նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

Հաշվետու ժամանակահատվածում դիտվել է 12-ամսյա գնաճի՝ սպասվածից արագ տեմպերով նվազում, ինչը հիմնականում պայմանավորվել է արտաքին հատվածից գնաճային ազդեցությունների զգալի թուլացմամբ և դրամի շարունակական արժևորմամբ: Սա ուղեկցվել է ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային պայմանների խստացման տեմպերի աստիճանական թուլացմամբ: Այդ իրավիճակում վերջին երկու եռամսյակներում գնաճի նախանշվող ուղեգիծը կարճաժամկետ հատվածի համար ճշգրտվել է դեպի ներքև:

Գրաֆիկ 1

Դիտարկվող ժամանակահատվածում 12-ամսյա գնաճը հիմնականում ցուցաբերել է նվազող վարքագիծ, ինչից ելնելով, վերջին երկու եռամսյակների կարճաժամկետ գնահատականը վերանայվել է ներքևի ուղղությամբ



Համաձայն փաստացի զարգացումների՝ 2022 թ. երկրորդ եռամսյակից, ռուս-ուկրաինական հակամարտության սրման և Ռուսաստանի տնտեսության նկատմամբ տարբեր պատժամիջոցների կիրառման հետևանքով, դիտվել է Հայաստան միջազգային այցելուների և դրամական միջոցների մեծաքանակ ներհոսք, ինչն արտահայտվել է տնտեսական ակտիվության աճի տեմպերի զգալի արագացմամբ: Բարձր տնտեսական աճին գերակշռող նպաստում են ունեցել ներքին ծառայությունների նկատմամբ արտաքին պահանջարկի գործոնները: Դրական զարգացումներ են դիտվել նաև արտահանման ոլորտում, հատկապես՝ ՏՏ և մշակող արդյունաբերության ճյուղերում, նախանշելով այդ ոլորտներում արտադրական ներուժի և արտահանման ավելացման միտումները: Այնուամենայնիվ, շարունակաբար աճող պահանջարկը նպաստել է ընդհանուր գնաճային միջավայրի ընդլայնմանը և բարձր գնաճային սպասումների ձևավորմանը: 2022 թ. երրորդ եռամսյակից մինչև 2023 թ. առաջին եռամսյակն ընկած ժամանակահատվածում, պայմանավորված ՀՀ հիմնական գործընկեր երկրների ԿԲ-ների վարած զսպողական դրամավարկային քաղաքականության արդյունքում էներգակիրների և պարենամթերքի գների նվազմամբ, ինչպես նաև արժեշրջանների խաթարումների աստիճանական ճշգրտմամբ, նկատվել է արտաքին հատվածից գնաճային ազդեցության որոշակի թուլացում: Արդյունքում՝ ՀՀ ընդհանուր գնաճային միջավայրը զգալիորեն մեղմվել է, սակայն դեռևս պահպանվող բարձր պահանջարկը շարունակել է նպաստել աշխատավարձերի և առանձին ապրանքների ու ծառայությունների գների աճին: Դիտարկվող ժամանակահատվածում միջազգային այցելուների կողմից ներկայացված մեծ պահանջարկի և արտերկրից ֆինանսական փոխանցումների զգալի ներհոսքի շնորհիվ ՀՀ արժութային շուկայում դրամն էականորեն արժևորվել է՝ նպաստելով նշված գնաճային գործոնների ազդեցության որոշակի մեղմմանը:


Նման զարգացումների պայմաններում ԿԲ-ն 2022 թ. երկրորդ եռամսյակում ձեռնպահ է մնացել տոկոսադրույքի փոփոխությունից՝ հաշվի առնելով արտաքին պահանջարկի ավելացմանը զուգահեռ ՀՀ դրամի արժևորման արդյունքում գնաճային ազդեցությունների աստիճանաբար մեղմման սպասումները: Այնուամենայնիվ, երրորդ և չորրորդ եռամսյակներում, չնայած արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա գնաճային ազդեցությունների որոշակի թուլացմանը, միջազգային այցելուների ու զբոսաշրջիկների, ինչպես նաև ֆինանսական միջոցների շարունակվող մեծ ներհոսքի պայմաններում ներքին տնտեսությունում ընդլայնվող պահանջարկի և բարձր գնաճային սպասումների պարագայում ԿԲ-ն խստացրել է դրամավարկային պայմանները և բարձրացրել քաղաքականության տոկոսադրույքը 0.75-ական տոկոսային կետով: 2023 թ. առաջին եռամսյակում շարունակվել են ներմուծված պարենային ապրանքների մասով դիտվող գնանկումային երևույթները, սակայն դեռևս պահպանվող բարձր պահանջարկը նպաստել է առավելապես «կոշտ» գներով աչքի ընկնող ապրանքախմբերում գների աճին: Նման իրավիճակում ԿԲ-ն քաղաքականության տոկոսադրույքը թողել է անփոփոխ՝ պահպանելով հարաբերականորեն խիստ դրամավարկային պայմանները:

Ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով 2022 թ. առաջին եռամսյակի վերջից դիտվել է ՀՀ ֆինանսական շուկայի տատանողականության ավելացում: ԿԲ-ն տարվա ընթացքում հետևողական է եղել ֆինանսական շուկայում իրացվելիության համարժեք կարգավորման նպատակին հասնելու հարցում, ինչի

արդյունքում շուկայական տոկոսադրույքները հիմնականում ձևավորվել են գործառնական նպատակի՝ քաղաքականության տոկոսադրույքի շուրջ: Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսական շուկայում արտարժույթի առաջարկի և դրամի նկատմամբ պահանջարկի էական ավելացման արդյունքում ՀՀ դրամը շարունակաբար արժևորվել է: Արտարժույթի մեծածավալ հոսքերի պայմաններում արժույթային շուկայում դիտված կարճաժամկետ խաթարումների և խնդիրների չեզոքացման նպատակով ԿԲ-ն շուկայում ունեցել է իրավիճակային միջամտություն՝ նպաստելով ֆինանսական շուկայի բնականոն գործունեությանը:

Գրաֆիկ 2

ԿԲ գործիքների և կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքների վարքագիծը



Ամփոփելով նշենք, որ հաշվետու ժամանակահատվածի սկզբում ձևավորված 12-ամսյա բարձր գնաճն այնուհետև, իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության, դրամի արժևորման և արտարժույթի հատկապես զգալի թուլացման արդյունքում, արագ տեմպերով նվազել է և 2023 թ. մարտի վերջին կազմել 5.4%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս այդ ընթացքում ցուցաբերել է նմանարիպ վարքագիծ՝ հասնելով մինչև 6.4%-ի: Գնահատվում է, որ իրականացվող դրամավարկային քաղաքականության ազդեցությամբ 12-ամսյա գնաճը կշարունակի նվազել և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

2. ԳՆԱԾԻ ՏԱՐԻԵՐԸ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

2022 թվականի երկրորդ եռամսյակից սկսած՝ արտաքին հատվածից փոխանցվող և ներքին տնտեսությունում պահանջարկի աճով սնուցվող բարձր գնաճային միջավայրը պահպանվել է և միայն տարեվերջից դրսևորել որոշակի թուլացման միտում: Վերջինս իր արտահայտությունն է ստացել սպառողական զամբյուղի առանձին ապրանքախմբերի վարքագծում:

Այսպես՝ ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով 2022 թ. առաջին եռամսյակի վերջից միջազգային պարենային շուկաներից փոխանցվող ազդեցությունների հետևանքով ներքին տնտեսությունում դիտվել է «Հացաբուլկեղեն և ձավարեղեն», «Մսամթերք», «Կաթնամթերք», «Յուղեր և ճարպեր» ապրանքախմբերի գների կտրուկ աճ: Էներգակիրների միջազգային գների ավելացումն իր ազդեցությունն է փոխանցել վառելիքի գների աճին: Միևնույն ժամանակ, ՀՀ ժամանած միջազգային այցելուների մեծ հոսքով պայմանավորված, ՀՀ տնտեսությունում ձևավորված բարձր պահանջարկը գնաճային ճնշումներ է ավելացրել նաև տեղական արտադրության ապրանքների և հատկապես ծառայությունների մասով, ինչի պարագայում ճշգրտվել են գնային հարաբերական կոշտություններ ունեցող մի շարք ծառայությունների (բնակարանի վարձակալություն, ռեստորաններ և հյուրանոցներ, վարսավիրանոցային, ֆինանսական, փոստային ծառայություններ) սակագները, որոնք հաշվետու ժամանակաշրջանի ողջ ընթացքում աստիճանաբար աճել են: 2022 թվականի չորրորդ եռամսյակում համաշխարհային տնտեսության սպասվող թույլ պահանջարկի և ֆինանսական պայմանների խստացման ներքո միջազգային ապրանքահումքային շուկաներում դիտվել է որոշ ապրանքների (վառելիք, արևածաղկի ձեթ, հացահատիկ, շաքարավազ) գների նվազում, ինչն արտահայտվել է նաև ՀՀ տնտեսություն ներմուծված ապրանքների գներում: Պետք է փաստել նաև, որ արտաքին պահանջարկի աճին զուգահեռ դրսևորվող ՀՀ դրամի արժևորումը, 2022 թվականի երրորդ եռամսյակից սկսած, նշանակալիորեն զսպել է ներմուծված ապրանքների գների աճը: Թեև այս ամենն արտահայտվել է եռ/եռ բնականոն գնաճի միտումների էական նվազմամբ, այնուամենայնիվ, բնականոն գնաճի հիմնական տարրերի՝ ծառայությունների և մեծ խումբ ոչ պարենային ապրանքների գների բարձր աճը շարունակում է էական նպաստում ունենալ ներքին գնաճի զարգացումներին:

Միաժամանակ, բնականոն գնաճի տարրերից «Ծխախոտային արտադրատեսակներ» և «Ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբերի գների աճը, ինչպես և գնահատվում էր, կրել է 2022-2023 թթ. տարեսկզբներին ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխության գնաճային ազդեցությունը հատկապես ծխախոտային արտադրատեսակների մասով: Արտահանման ծավալների հարաբերական կրճատման արդյունքում տեղական ալկոհոլային խմիչքների շուկայում ավելի մեղմ գնաճը որոշակիորեն զսպել է գնաճային դրսևորումները ընդհանուր ապրանքախմբում:


Բացի վերը նշված գործոններից՝ հաշվետու ժամանակահատվածի սկզբից գնաճի արագացմանն էական նպաստում է ունեցել սեզոնային պարենային ապրանքների գների բարձր աճը: Բանջարեղենի բարձր գների ձևավորման վրա իր ազդեցությունն է ունեցել առանձին ապրանքատեսակների մասով ցանքատարածությունների կրճատումը, իսկ մրգերի մասով՝ ոչ բարենպաստ եղանակային պայմանները՝

հատկապես երկրորդ եռամսյակում: 2022 թվականի երրորդ եռամսյակից սկսած՝ այս գործոնների ազդեցությունը գնաճի վրա որոշակիորեն մեղմվել է:

2022 թվականի երկրորդ եռամսյակում կարգավորվող ծառայությունների սակագները շարունակել են ավելանալ՝ պայմանավորված մարտից էլեկտրաէներգիայի, իսկ ապրիլից նաև բնական գազի մատակարարման ծառայությունների սակագների աճով: Այս ծառայությունների երկրորդային գնաճային ազդեցությունները դրսևորվել են հատկապես 2022 թվականի երկրորդ կիսամյակում, և թուլացման միտումներ նկատվել են միայն հաշվետու ժամանակահատվածի վերջում:

Գրաֆիկ 3

**2022 թվականի առաջին կիսամյակում գնաճային միջավայրի կտրուկ ավելացումը
փարեվերջին ցուցաբերել է որոշակի թուլացման միտում**



| Ապրանքախմբի անվանումը | Կշիռներ | 12-ամսյա գնաճը 2023 թվականի մարտին | Նպաստումը տ/տ գնաճին |
|--|-------------|--|-------------------------|
| Բնականոն գնաճ | 73.9 | 6.4 | 4.7 |
| Հացաբուլկեղեն և ձավարեղեն | 8.5 | 6.0 | 0.5 |
| Միս | 10.6 | 7.5 | 0.8 |
| Յուղեր և ճարպեր | 2.9 | -6.0 | -0.2 |
| Շաքարավազ | 0.5 | -10.9 | -0.1 |
| Կաթնամթերք | 4.4 | 12.0 | 0.5 |
| Ալկոհոլային խմիչքներ | 2.5 | 7.8 | 0.2 |
| Ծխախոտային արտադրատեսակներ | 2.0 | 8.8 | 0.2 |
| Հագուստ | 2.2 | 6.7 | 0.2 |
| Կոշիկ | 1.2 | 8.9 | 0.1 |
| Կենցաղային սարքեր | 0.6 | 5.9 | 0.0 |
| Վառելիք | 5.4 | -2.6 | -0.1 |
| Օդային մարդատար տրանսպորտի ծառայություն | 1.1 | 47.5 | 0.5 |
| Ամբուլատոր ծառայություն | 2.6 | 6.6 | 0.2 |
| Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար | 1.1 | 33.1 | 0.4 |
| Ռեստորաններ և հյուրանոցներ | 1.9 | 9.0 | 0.2 |
| Վճարներ բանկերի, փոստային բաժանմունքների ծառայությունների համար | 0.8 | 21.4 | 0.2 |
| Ներմուծված պարենային ապրանքներ | 15.3 | 3.6 | 0.6 |
| Սեզոնային պարենային ապրանքներ | 11.0 | 1.7 | 0.2 |
| Ձու | 1.6 | -1.1 | 0.0 |
| Մրգեր | 4.1 | 8.7 | 0.4 |
| Բանջարեղեն | 5.3 | -0.7 | 0.0 |
| Կարգավորվող ծառայություններ | 15.1 | 2.0 | 0.3 |